

ԱՇՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ

II

Ներքին Թաղանթներու Բիււանդուութիւններ

Լուսնը (հակուր, cataracte) պահած է իր համեմատութիւնը, բայց ժողովուրդը այս հիւանդութեան հանդէպ գործողութեան տուած լաւ արդիւնքներէն քաջալերուելով, յաճախակի սկսած է օգտուիլ անոր բարիքներէն:

Խաժախտաւոր (glaucomateux)ներու թիւը, ինչպէս նախորդ տարի, այս տարի ևս բարձր համեմատութիւններու հասած է: Բայց դարմանումի համար կիրարկուած գործողութեան նոր ձևը շատ աւելի ընդհանրացած է:

Ալքոլի ու Նիքոթինի պէս թոյներու ազդեցութեան տակ տեսողական գործարանին տկարութենէն տառապող հիւանդները, բաղդատմամբ ուրիշ երկիրներու, նուազ են: Բայց Քոխի պասիլին (թիւ պերֆիւզի մանրէին) ներքին թաղանթներու վրայ առաջ բերած յամր ու տեսական հիւանդութիւնները, որոնք տեսողական գործարանը հիմնական խանգարումներու կ'ենթարկեն, յաճախ ուշադրութիւն կը գրաւեն:

Այս չրջանին սիֆիլիզին աչքերու վրայ առաջ բերած կարևոր բարդութիւնները շատ ցանցառ են: Այս հիւանդութեան համար գործածուած նորահնար դեղերը կանխած են չարիքը:

Ներքին թաղանթներէն ցանցենին սնուցանող շնչերակներէն ու երակներէն մէկուն խզումը կամ խցումը տեսողութեան կարևոր խանգարումներ կը պատճառէ: Որովհետև աչքը եւ ուղեղը մարդկային միակ գործարաններն են, որոնց շնչերակային դրութեան ճիշդաւորումները առանց իրենց մօտ գտնուող ուրիշ ճիւղաւորումներու հետ հաղորդակցելու, կը վերջանան անկախաբար: Հետևաբար երբ այս շնչերակներէն մէկը խզում մը ունենայ, ուրիշ մօտակայ շնչերակները չեն կրնար ցանցենիին այդ մասը արիւնով ոռոգել ու սնունդ մատակարարել: Անսնունդ մնացած չրջանակը գործունէութենէ կը դադրի: Հետևաբար տեսողական զգացողութիւնն ալ կը կասի:

Ծանցենիին մէջ դիտուած այս կարևոր բարդութիւնները հետևանք են մարմնոյն շնչերակային ու երակային դրութեան հիւանդութիւններուն:

Այսօր ընդունուած է թէ որոշ տարիքէ մը վերջը մարդկային կազմը, ընդունած սննդեղէնէն մէկ մասը թէ չի կրնար հալեցնել և թէ չի կրնար մարմնէն դուրս լիտարել: Այս անօգուտ ու փեսակար

մասնիկները մարդկային գործարանները անզգալի թունաւորումի ենթարկելով կը խաթարեն անոնց գործունէութիւնը: Շնչերակային ու հրակային գրութիւնն ալ ազդուելով՝ կը կորսնցնէ իր առաձգականութիւնը ու չի կրնար յարատե կծկուելու ու լայննալու գործողութիւնը բնականոն կերպով կատարել: Այսպիսի դիւրարեկ շնչերակներ արեան ճնշումին դիւրաւ տեղի տալով՝ խզումներ ու արիւնահոսումներ կ'ունենան:

Յաճախակի այս շրջանին դիտուած են ինքնաթուաւորումի ու փոխադարձաբար երիկամունքի հիւանդութիւններէն դոյացած այս պնդերակութեան յառաջ բերած խզումի ու արիւնահոսութեան աչքի պարագաներ:

Աչքերու խորքին քնութիւնը մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանէ ներքին հիւանդութիւններու ախտորոշումին: Բազմաթիւ հիւանդներու յամառ գլխու ցաւերը ուղեղային ուռերու հետեւանք ըլլալը կարելի եղած է ախտորոշել շնորհիւ բերբերու լուսամուտէն աչքին ներքին թաղանթներու քննութեամբ:

Աչքի Թերութիւններ

Ժողովուրդը աչքերու թերութիւնը ակնոցներով սրբագրելու պէտքը գնահատած է միւս շրջաններէն աւելի: Տեսողութիւնը ուղղելու համար տարուած այս խնամքը նպաստած է նաև մանուկներու շիլութեան դարմանումին: Որովհետև միայն ակնոցով կարելի է բուժել շիլերը՝ անշուշտ սկզբնական շրջանին: Տասնեակ տարիներ առաջ աղոց ակնոց գնելը հազուադէպ երեւոյթ մըն էր, մինչդեռ այսօր սովորական դարձած է: Միայն թէ մեր ազգային ու մասնաւոր վարժարաններու վարիչ մարմիններուն ուշադրութենէն վրիպած է տեսողութիւնը պարտաւորիչ կերպով չափելու գրութիւնը: Օտար վարժարաններու մէջ այս միջոցաւ կը զատորոշուին աչքի թերութիւն ունեցող աշակերտները առողջներէն ու դարմանումը պարտադրելով՝ կը կանխեն տեսողութեան թերութիւններու յառաջխաղացումը:

Ակնոցները կը նպաստեն նաև աչքերու թերութիւններէն յառաջացած յամառ գլխու ցաւերուն ու աչքերու յոգնութեան անհետացման:

Աչքի արկածներ

Երկաթի պէս հատու մարմիններու հետ աշխատող գործաւորներու աչքի արկածները տարուէ տարի ոկտած են քաղմանալ Պոլսոյ մէջ: Շատ անգամ այս հատու մարմիններէն թռած խաբառւքները կը մխուրն խեղճ գործաւորներուն աչքին մէջ, ու տեսողութիւնը կարևոր կերպով կը վտանգուի: Այս առթիւ գործածուած ակնոցները մեծամեծ օգուտներ կ'ապահովեն:

Այլքի կարևոր արկածներ կը դիտուին նաև այնպիսի մանուկներու մօտ, որոնք անխոհմարար հատու առարկաներով ժամանակ կ'անցընեն, կամ գրիչի պէս պիտանի գործիքներով կը զբօսնուն։ Այս շրջանին պատահած քանի մը կարևոր արկածներ, որոնք մանուկներու տեսողական գործարանին փճացումովը վերջացան, անգամ մը ևս կը ստիպեն զիս այս խնդիրը հանրութեան ուշադրութեան յանձնելու։

Պոլիս

ԲԺ. Ե. ՇԱՀՊԱՋ

Ակնարդժ Ազգային ու Ամբիկեան Յիւանդանոցներու

ԾՈՎԸ ԵՒ ԻՐ ԿԼԻՄԱՆ

Բ. — ԾՈՎԻ ԿԼԻՄԱՆ

Ծովի լոգանք առնողները ակամայ կ'ենթարկուին նաև անոր կլիմայական ազդեցութեան։

Արդ, ծովային կլիման հարուստ է թթուածինով, օդոնով(*) և քիմիական տարրերով,— կերակուրի աղ, մանիշ, բնականօքի փոշի, որոնք թոքախտաւորներու համար բուժիչ յատկութիւններ ունին։

Ասոնցմէ դուրս ծովի օդը 1.— Ունի բաւարար և անփոփոխ քանակութեամբ ջրաշոգի, ինչ որ անոր խոնավութեան աստիճանը կը կայունացնէ, 2.— ունի ջերմական կայունութիւն, որ ծովային հոսանքներու և ջուրէն արտացոլացեալ ջերմութեան ճառագայթումին ուղղակի հետեանքն է, 3.— փոշիներէ և մանրէներէ զտուած ու մաքրուած է, 4.— լուսաւորութեամբ ողողուած է, արդիւնք տեսանելի երկնակամարի տարածութեան, ծովափերու լոյսի անզրադարձիկ ճառագայթումի և ալիքներու մակերեսէն արտացոլած դեղին ու կապոյտ ճառագայթումի, որովհետև ծովային կապոյտ հայելին ծծած է ենթակարմիր (infrarouge) ճառագայթները, 5.— ելեքտրականացում։ Այս ամէնուն շնորհիւ, ծովային կլիման շնչառութեան ծաւալը կ'աճեցնէ, առանց թոքերը յոգնեցնելու, կ'արիացնէ միզումը, մկաններու զօրութիւնը, ջրային դրութիւնը, մարսողութեան գործունէութիւնը և կ'աւելցնէ ախորժակը, կը դիւրացնէ բնաօպիտային նիւթերու սպառումը, լուսածնային նիւթերու օգտագործումը, կը նուազեցնէ հանքային նիւթերու արտահոսման քանակը, որ կարևոր է բորակածիւնի շարժունութեան համար։ Կը հետևի որ ծովերու կլիման սննդառութեան զօրաւոր փոփոխիչ մըն է, և գործարանային վերանորոգումի ազդակ մը. այս բոլոր երևոյթները կը գիւրացուին

(*) Օդոնը տեսակ մը խտացեալ մթնածին է, որովհետեւ 3 մթնածին իւրաքու միաւնալով կը կազմեն մէկ օդոն։ Ծովի օդոնը, միւս կողմէ, քաղաքներու մէջ գտնուածէն աւելի է։